

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Նկարում կետի n° բարձրությունն է նշված U տառով.

- 1) միջին
- 2) բացարձակ
- 3) ուղղաձիգ
- 4) հարաբերական



2 Ո՞րն է ամենափոքր մասշտաբը.

- 1) 1 : 56 000
- 2) 1 : 560 000
- 3) 1 : 5 600 000
- 4) 1 : 5 600

3 Երկու կետերի հեռավորությունը քարտեզում 32 սմ է, իսկ քարտեզի մասշտաբը՝ 1 : 4 800 000: Կետերի միջև իրական հեռավորությունը կլինի.

- 1) 2000 կմ
- 2) 3072 կմ
- 3) 6144 կմ
- 4) 1536 կմ

4 Արեգակի ճառագայթներն ուղղահայաց ընկնում են հասարակածի վրա.

- 1) մարտի 21-ին և հունիսի 22-ին
- 2) սեպտեմբերի 23-ին և դեկտեմբերի 22-ին
- 3) մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին
- 4) հունիսի 22-ին և դեկտեմբերի 22-ին

5

Բնութագրումով որոշել հողմահարման տեսակը.

Այդ հողմահարումը տեղի է ունենում ապարի և օդի գազերի միջև կատարվող փոխազդեցության և ջրային տարբեր լուծույթների միջոցով, ընդ որում՝ դրա հետևանքով ապարների հատկանիշները փոխվում են, առաջանում է նոր ապար: Հողմահարման n° տեսակն է.

- 1) օրգանական
- 2) ֆիզիկական
- 3) երկրաբանական
- 4) քիմիական

6

Աշխարհագրական n° լայնություններում է ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը մեծ.

- 1) բարեխառն
- 2) հասարակածային
- 3) արևադարձային
- 4) բևեռային

7

Կլիմայի այն տիպը, որին բնորոշ են ցուրտ ու չոր ձմեռները և տաք ու խոնավ ամառները, կոչվում է.

- 1) միջերկրածովային
- 2) ցամաքային
- 3) մուսսոնային
- 4) ծովային


8

Ռուսական «Վոստոկ» գիտակայանը Հարավային բևեռից հեռու է 1221 կմ: Աշխարհագրական n° լայնության վրա է գիտակայանը.

- 1) հվ. լ. 77,5°
- 2) հվ. լ. 81°
- 3) հվ. լ. 79°
- 4) հվ. լ. 69°


9 Ո՞ր քամիներն են պատկերված նկարում.

- 1) պասսատներ
- 2) մուսսոներ
- 3) լեռնահովտային քամիներ
- 4) բրիզներ



10 Ո՞ր նկարում է պատկերված երկրագնդի վրա քաղցրահամ և աղի ջրերի ճիշտ հարաբերակցությունը.

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա



11 Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքներ են.

- 1) Բրազիլականը և Կանարյանը
- 2) Մուսսոնայինը և Ֆոլկլենդյանը
- 3) Պերուականը և Արևելաավստրալականը
- 4) Բենգեյանը և Գվինականը

12 **Ի՞նչն է բնորոշ տունդրայի բնական զոնային.**

- 1) հողի բազմամյա սառածությունը
- 2) ծառային բուսականության տարածումը
- 3) խոտակեր խոշոր կենդանիների տարածումը
- 4) պոդզոլային հողերի գերակշռությունը

13 **Բնութագրումով որոշել ոլորտը.**

Վերնոլորտի սահմաններում՝ 25–30 կմ բարձրության վրա է այդ գագից բաղկացած շերտը, որը կլանում է Արեգակից եկող՝ կյանքի համար վտանգավոր ուլտրա-մանուշակագույն ճառագայթները: Գագային ո՞ր շերտն է.

- 1) ածխաթթու գագի
- 2) ջրածնի
- 3) օզոնի
- 4) թթվածնի

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Տարվա ընթացքում իրենց ուղղությունը երկու անգամ փոխող քամիները կոչվում են թայֆուններ:
- 2) Արևադարձներից դեպի բարեխառն գոտիներ փչող քամիները կոչվում են մուսսոններ:
- 3) Արևադարձներում օդի վերընթաց շարժման հետևանքով առաջանում են ցիկլոններ:
- 4) Տաք և սառը օդային զանգվածների շփումից առաջացած մրրկահողմը Հյուսիսային Ամերիկայում կոչվում է տորնադո:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Ամբողջ տարվա ընթացքում մթնոլորտային բարձր ճնշման գոտիներ են առաջացել հասարակածային և բարեխառն լայնություններում:
- 2) Որքան արևի ճառագայթների անկման անկյունը փոքր է, այնքան ստացվող ջերմությունը քիչ է:
- 3) Ամբողջ տարվա ընթացքում մթնոլորտային ցածր ճնշման գոտիներ են առաջացել արևադարձային և բևեռային լայնություններում:
- 4) Որքան օդը սառն է, այնքան մթնոլորտային ճնշումը ցածր կլինի:

16

Կանադական արկտիկական արշիպելագի կղզիներ են.

- 1) Կուբան և Հայիթին
- 2) Բաֆինի Երկիրը և Վիկտորիան
- 3) Պուերտո Ռիկոն և Ճամայկան
- 4) Նյուֆաունդլենդը և Վանկուվերը

17

Ո՞ր տարածքների կլիման մուսսոնային չէ.

- 1) Հինդուստան թերակղզի և Հոնսյու կղզի
- 2) Փոքր Ասիա թերակղզի և Բալկանյան թերակղզի
- 3) Ամուր և Յանցզի գետերի միջին ու ստորին հոսանքների ավազան
- 4) Կորեա թերակղզի և Կյուսյու կղզի

18

«Գետ – հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Հուանհե – գարուն
- 2) Օրինոկո – ձմեռ
- 3) Զամբեզի – ամառ
- 4) Եփրատ – ձմեռ

19

**Մագնիսական հակումը արևելյան է՝ $3^{\circ} 35'$, իսկական ազիմուտը՝ 176° :
Մագնիսական ազիմուտը կլինի.**

- 1) $172^{\circ} 25'$
- 2) $179^{\circ} 25'$
- 3) $179^{\circ} 35'$
- 4) $172^{\circ} 65'$

20

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մարտի 21-ը կոչվում է գարնանային գիշերահավասարի օր:
- 2) Դեկտեմբերին ցերեկը Հարավային բևեռում ավելի կարճ է, քան Երևանում:
- 3) Արեգակի ճառագայթները հս. լ. 25°-ի տակ տարվա մեջ մեկ անգամ ընկնում են ուղղահայաց:
- 4) Հունիսի 22-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Անտիցիկլոնի կենտրոնում ճնշումն ավելի ցածր է, քան ծայրամասերում:
- 2) Լեռն ի վար իջնելիս մթնոլորտային ճնշումը նվազում է:
- 3) Անամպ օրերին ամենուր օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվում է վաղ առավոտյան:
- 4) Սառը օդի ճնշումն ավելի մեծ է, քան տաք օդինը:

22

Աֆրիկայի մերձարևադարձային մշտականաչ անտառների ու թփուտների բնական գոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հողային ծածկում գերակշռում են շագանակագույն և մոխրագորշ հողերը:
- 2) Տարածված բուսատեսակներն են բաոբաբը, ֆիկուսը, կաուչուկատու հնեան:
- 3) Տարածված կենդանատեսակներն են էմու ջայլամը, դինգո շունը և բադակտուցը:
- 4) Մթնոլորտային տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:

23


Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մեծ Ավստրալական և Կարպենտարիա ծոցերը պատկանում են Հնդկական օվկիանոսի ավազանին:
- 2) Պարսից ծոցը Օմանի ծոցից բաժանվում է Բոսֆորի նեղուցով:
- 3) Աշխարհում մակընթացության ամենաբարձր ալիքը գրանցվել է Հուդզոնի ծոցում:
- 4) Բիսկայան ծոցի ջրերը ողողում են Պիրենեյան թերակղզու հարավային ափերը:

24

Քարտեզում **Ա** տառով n° ը հրվանդանն է նշված.

- 1) Յորք
- 2) Հարավարևելյան
- 3) Ստիվի Փոյնթ
- 4) Բայրոն



25

Քարտեզում **Ը** տառով n° ը նավահանգիստն է նշված.

- 1) Սիդնեյ
- 2) Մելբուռն
- 3) Բրիսբեն
- 4) Փերթ

26

Ներկայումս երկրագնդի բնակչության թիվը տարեկան աճում է.

- 1) 60–70 մլն–ով
- 2) 75–85 մլն–ով
- 3) 100–110 մլն–ով
- 4) 50–60 մլն–ով

27

Բնակչության ամենօրյա տեղաշարժը մի բնակավայրից մեկ այլ բնակավայր աշխատանքի կամ ուսման նպատակով, որը հատկապես տարածված է քաղաքային ագլոմերացիաներում, կոչվում է.

- 1) էմիգրացիա
- 2) ներքին միգրացիա
- 3) ճոճանակային միգրացիա
- 4) սեզոնային միգրացիա

28

Բնութագրումով որոշել երկիրը.

*Եվրոպական այս երկիրը էլք չունի դեպի Համաշխարհային օվկիանոս:
Մակերևույթը լեռնային է, հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով: Տնտեսության
միջազգային մասնագիտացման ճյուղերից են պանրագործությունը, ժամացույց-
ների արտադրությունը: Ո՞րն է այդ երկիրը.*

- 1) Շվեյցարիան
- 2) Շվեդիան
- 3) Ավստրիան
- 4) Ֆրանսիան

29

**Երկրի տարածքը կազմում է 96 400 կմ², բնակչության թիվը՝ 12 050 000 մարդ:
Բնակչության միջին խտությունը կլինի.**

- 1) 125 մարդ/կմ²
- 2) 155 մարդ/կմ²
- 3) 6025000 մարդ/կմ²
- 4) 11953600 մարդ/կմ²

30

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության խտությունը տեղանքի բացարձակ բարձրության մեծացմանը
զուգընթաց ավելանում է:
- 2) Բնակչության տեղաբաշխման օրինաչափություններից է նրա խտության աճը
ծովերից կամ օվկիանոսներից հեռանալուն զուգընթաց:
- 3) Ջարգացած վերամշակող արդյունաբերություն ունեցող տարածքներին բնորոշ է
բնակչության մեծ խտությունը:
- 4) Երկրագնդի բնակչության ընդամենը մի փոքր մասն է ապրում Արևելյան և
Հարավային Ասիայում:

31

Աշխարհում ամենամեծ թվով ներգաղթածներ ունեցող երկրներից են.

- 1) Ճապոնիան և Կորեան
- 2) ԱՄՆ-ը և Գերմանիան
- 3) Հնդկաստանը և Ուզբեկստանը
- 4) Չինաստանը և Մոլդովան

32 Սլավոնական լեզվախմբին պատկանող լեզուներ *չեն*.

- 1) լեհերենը և չեխերենը
- 2) ուկրաիներենը և չեխերենը
- 3) հունարենը և վրացերենը
- 4) ռուսերենը և բելառուսերենը

33 Ո՞ր երկրների համար է նավթի հանույթը միջազգային մասնագիտացման ճյուղ.

- 1) Ալժիր և Եթովպիա
- 2) Շվեդիա և Իրան
- 3) Լեհաստան և Իրաք
- 4) Վենեսուելա և Նիգերիա

34 Հիմնականում ներմուծվող հումքի և վառելիքի հիման վրա պողպատ արտադրող երկրներ են.

- 1) Չինաստանը և ՌԴ-ն
- 2) Լեհաստանը և Բրազիլիան
- 3) ԱՄՆ-ը և Ուկրաինան
- 4) Ճապոնիան և Իտալիան

35 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:
- 2) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:
- 3) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա:
- 4) Աէկներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:

36

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Գյուղատնտեսության զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշներից առավել կարևոր է մեկ շնչի հաշվով գյուղմթերքների արտադրությունը:
- 2) 1960–ական թթ. տեղի ունեցած «Կանաչ հեղափոխությունը» բնորոշ էր զարգացած երկրներին, իսկ 1980–ական թթ. տեղի ունեցած երկրորդ «Կանաչ հեղափոխությունը»՝ զարգացող երկրներին:
- 3) Բոլոր բնական զոնաների խտաբնակ շրջաններին և մերձքաղաքային գոտիներին բնորոշ է էքստենսիվ գյուղատնտեսությունը:
- 4) Գյուղատնտեսության կապիտալիստական–ձեռնարկատիրական սոցիալ–տնտեսական տիպը բնորոշ է հիմնականում Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի երկրներին:

37

«Անասնապահության մասնագիտացման ճյուղ – երկիր» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) խոզաբուծություն – Ինդոնեզիա
- 2) ոչխարաբուծություն – Դանիա
- 3) մսատու անասնապահություն – Արգենտինա
- 4) կաթնատու անասնապահություն – Լիբիա

38

ՆԱԵԿ-ի անդամ երկրներ են.

- 1) Լիբանանը և Սիրիան
- 2) Բրազիլիան և Արգենտինան
- 3) ԱՄՆ–ը և Ռուսաստանը
- 4) Ալժիրը և Լիբիան

39

Ո՞ր երկու պետություններն են Արևմտյան Եվրոպա տարածաշրջանում.

- 1) Սան Մարինո և Լյուքսեմբուրգ
- 2) Մոնակո և Անդորրա
- 3) Լիխտենշտեյն և Սան Մարինո
- 4) Լիխտենշտեյն և Լյուքսեմբուրգ

40

Կենտրոնական Ասիայի երկրներից Ռուսաստանին սահմանակից է.

- 1) Ղրղզստանը
- 2) Ղազախստանը
- 3) Տաջիկստանը
- 4) Ուզբեկստանը

41

Բնութագրումով որոշել պետությունը.

Հարավարևմտյան Ասիայի այս պետությունն աշխարհի առաջատարներից է բորատի ու քրոմիտի պաշարներով: Բնակչության գերակշիռ մասը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը: Բնակչության թվով երկրորդ ազգը քրդերն են: Ո՞րն է այդ պետությունը:

- 1) Սաուդյան Արաբիան
- 2) Իրանը
- 3) Իրաքը
- 4) Թուրքիան

42

Գերմանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Գետային ցանցը խիտ է, սակայն գետերը նավարկելի չեն:
- 2) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 3) Արտաքին առևտրի շրջանառության ծավալով առաջինն է աշխարհում:
- 4) Խոշոր նավահանգիստներից են Համբուրգը և Ռոստոկը:

43

Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների մարզը շուրջ 500 կմ ձգվում է Սև ծովի հարավային ափերի երկայնքով:
- 2) Եզրային ծալքաբեկորավոր լեռներից ամենաբարձրը Կորդվաց լեռնաշղթան է:
- 3) Միջնաշխարհի կենտրոնական մասով զուգահեռականի ուղղությամբ ձգվում է Արևելյան (Հայկական) Տավրոսի լեռնաշղթան:
- 4) Արևելքից եզրավորվում է Փոքր Կովկասի լեռնային համակարգը կազմող լեռնաշղթաներով:

44

Հայկական լեռնաշխարհի բուսականության վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Արարատյան, Նախիջևանի և Ուրմիայի գոգավորությունների նախալեռնային գոտում տարածված է լեռնաչորասեր՝ ֆրիգանտիդ բուսականությունը:
- 2) Անտառների ստորին հարկում տիրապետում են լայնատերև ծառատեսակները, իսկ վերին հարկում՝ փշատերևները:
- 3) 4000 բուսատեսակներից 200-ը էնդեմիկ են, այսինքն՝ հանդիպում են միայն Հայկական լեռնաշխարհում:
- 4) Լեռնաշխարհի փոքր տարածքի պատճառով բուսականությունը բազմազան չէ:

45 **Ընտրել «հանքաքար – հանքավայր» գույգերից ճիշտը.**

- 1) պղնձահրաքար – Կապան
- 2) երկաթ – Ալավերդի
- 3) նեֆելինային սիենիտ – Եղեգնաձոր
- 4) ոսկի – Աբովյան

46 **Ի՞նչն է բնորոշ ՀՀ չոր մերձարևադարձային կլիմայի տիպին.**

- 1) Տեղումների միջին տարեկան քանակը հասնում է 800-900 մմ-ի:
- 2) Հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է +10⁰-ի շուրջ:
- 3) Տարածվում է 1500-2000 մ բարձրություններում:
- 4) Ձմեռը կարճատև է և մեղմ:

47 **Ո՞ր գույգի քաղաքները մինչև Հայաստանի խորհրդայնացումը քաղաքի կարգավիճակ ունեին.**

- 1) Չարենցավանը և Հրազդանը
- 2) Դիլիջանը և Իջևանը
- 3) Գորիսը և Գավառը
- 4) Վարդենիսը և Մարտունին

48 **ՀՀ սննդի արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը չունի արտահանման նշանակություն.**

- 1) մսի և մսամթերքի
- 2) հանքային ջրերի
- 3) գինու-կոնյակի
- 4) մրգի և բանջարեղենի պահածոների

49 **Ո՞ր մարզի տարածքում կա արգելոց.**

- 1) Տավուշի
- 2) Արարատի
- 3) Արագածոտնի
- 4) Արմավիրի

50


Տավուշի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Արևմտյան սահմանների երկայնքով ձգվում է Գուգարաց ծալքաբեկորավոր լեռնաշղթան:
- 2) Մակերևույթը հարավից հյուսիս աստիճանաբար բարձրանում է:
- 3) Հովտային շրջաններում լայն տարածում ունեն սողանքները:
- 4) Բարձրաչափական նիշերի տարբերությունը մոտ 2600 մ է:

51

Ո՞ր լեռնագագաթն է քարտեզում նշված *Բ* տառով.

- 1) Ուրծ
- 2) Վարդենիս
- 3) Գոզի
- 4) Ծղուկ



52

Ո՞ր հանքավայրն է քարտեզում նշված *Ե* տառով.

- 1) Շահումյանի
- 2) Ագարակի
- 3) Քաջարանի
- 4) Կապանի

53 Ո՞ր երկրներն են աղքատ ջրաէներգետիկ ռեսուրսներով.

- 1) Սաուդյան Արաբիան և Լիբիան
- 2) Ռուսաստանը և Թուրքիան
- 3) Վրաստանը և Նորվեգիան
- 4) Կանադան և Տաջիկստանը

54 Տրվածներից ո՞րը անապատների աճման հիմնական պատճառ չէ.

- 1) ագրոանտառաբարելավումը
- 2) արոտների գերարածեցումը
- 3) անտառների հատումը
- 4) գյուղատնտեսական հողատարածքների գերբեռնվածությունը մշակաբույսերով

55 Բոլոր տեսակի կենդանի օրգանիզմների ժառանգական հատկանիշների ու հակումների ամբողջությունը կոչվում է.

- 1) կենսացենոզ
- 2) էկոհամակարգ
- 3) գենոֆոնդ
- 4) ժառանգականություն

56 Գրել այն տարածաշրջանների համարները, որոնք խաղողագործության մեջ մասնագիտացած չեն.

- | | |
|-----------------------------|-------------------|
| 1) Լոռվա սարահարթ | 5) Շիրակի դաշտ |
| 2) Եղվարդի սարավանդ | 6) Արփայի հովիտ |
| 3) ՀՀ հյուսիսարևելյան մասեր | 7) Սևանի ավազան |
| 4) Զանգեզուրի հարավ (Մեղրի) | 8) Արարատյան դաշտ |

57 Գրել այն երկրների համարները, որոնք ունեն 100 մլն-ից ավելի բնակչություն.

- | | |
|--------------|--------------|
| 1) Ավստրալիա | 5) Արգենտինա |
| 2) Ֆրանսիա | 6) Բրազիլիա |
| 3) Իրան | 7) Գերմանիա |
| 4) Նիգերիա | 8) Կանադա |

58 Գրել միագործառույթային քաղաքների համարները.

- | | |
|--------------|-------------|
| 1) Մեծամոր | 5) Կապան |
| 2) Նոր Հաճրն | 6) Քաջարան |
| 3) Իջևան | 7) Ծաղկաձոր |
| 4) Արմավիր | 8) Հրազդան |

59

Գրել այն լճերի համարները, որոնք Ասիայում են.

- | | |
|--------------|-----------|
| 1) Աթաբասկա | 5) Պոռպո |
| 2) Սևանա | 6) Մեռյալ |
| 3) Օնեգա | 7) Ուրմիա |
| 4) Իսիկ Կուլ | 8) Թանա |

60

Գրել այն քաղաքների համարները, որոնք Հարավարևմտյան Ասիայի նավահանգիստներ են.

- | | |
|-------------|-----------------|
| 1) Դամասկոս | 5) Քարուլ |
| 2) Անկարա | 6) Սպահան |
| 3) Աբադան | 7) Բենդեր Աբբաս |
| 4) Մումբայ | 8) Կարաչի |

61

Գրել Միջերկրական ծովում գտնվող կղզիների համարները.

- | | |
|-------------|--------------|
| 1) Թասմանիա | 5) Կիպրոս |
| 2) Սարդինիա | 6) Սիցիլիա |
| 3) Հաիթի | 7) Շրի Լանկա |
| 4) Կորսիկա | 8) Իսլանդիա |

62

Արևմտյան Եվրոպայի տրված պետությունները դասավորել բնակչության թվաքանակի աճման կարգով.

- 1) Ֆրանսիա
- 2) Ավստրիա
- 3) Գերմանիա
- 4) Լյուքսեմբուրգ

63

ՀՀ տրված քաղաքների համարները դասավորել ըստ դրանց միջով հոսող գետերի հետևյալ հաջորդականությամբ՝ Աղստև, Որոտան, Դեբեդ.

- 1) Ալավերդի
- 2) Սիսիան
- 3) Իջևան

64

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. 22°, արլ. ե. 61°: Որոշել տվյալ վայրի ժամային գոտին:

(65-66) Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 24° է, իսկ գագաթին՝ 6°: Ստորոտը ծովի մակարդակից 1800 մ բարձրության վրա է (հաշվարկը կատարել 6°-ով):

65

Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

66

Որոշել Լեռան բացարձակ բարձրությունը:

(67-68) Երկրի բնակչության թիվը 8 մլն է, բնական աճի գործակիցը՝ 8 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 40 650 մարդ, արտագաղթը՝ 29 800 մարդ.

67 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

68 Որոշել բնակչության մեխանիկական աճը:

69

Աշխարհի բնակչության ռասայական կազմի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Բնակչության ռասայական և ազգային կազմերի սահմանները մշտապես համընկնում են:
- 2) Ժամանակակից խառը ռասաների ներկայացուցիչները լայն տարածում ունեն Լատինական Ամերիկայում:
- 3) Նեգրոիդ մեծ ռասայի տարածման հիմնական շրջանը Հարավային Ասիան է:
- 4) Ռասաների բնութագրիչ հատկանիշերն են լեզուն, մշակույթը և կրոնը:
- 5) Ռասայական հատկանիշների ձևավորման վրա ավելի շատ ազդեցություն են թողել սոցիալ-տնտեսական և քաղաքական, քան բնական գործոնները:
- 6) Մոնղոլոիդ ռասային բնորոշ են դեղնավուն մաշկը, սև և ուղիղ մազերը, աչքերի նեղ բացվածքը:

70

Հայկական լեռնաշխարհի գետերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս գետերի միախառնումից առաջանում է Շատ-Էլ-Արաբ գետը:
- 2) Սև ծովի ավազանին պատկանող գետերից է Ճորոխը:
- 3) Կուր գետի նշանավոր վտակներից են Խրամը, Դեբեդը, Աղստը:
- 4) Ունեն հիմնականում ձնաանձրևային և մասամբ ստորգետնյա սնում:
- 5) Հորդանում են առավելապես ամռանը:
- 6) Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից, Արևելյան Եփրատը՝ Ծաղկավետ լեռներից: